«Նոր ժամանակի կրթություն»
Ֆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ **ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Առարկան՝ **Դասվար**

Հետազոտող ուսուցիչ՝ **Սյուզաննա Վարսանյան**

Ուսումնական հաստատություն՝ **Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու անվան հ.1 հիմնական դպրոց**

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն..... 3

Գնահատման համակարգ/ սկզբունքները 4

Հայտորոշիչ գնահատում / Թեստ..... 5

Հայտորոշիչ գնահատման ձևերը/ Բանավոր հարցում.....7

Հայտորոշիչ գնահատման ձևերը/ Գրավոր աշխատանք.....8

Հայտորոշիչ գնահատման ձևերը/ Գործնական աշխատանք.....9

Ձևավորող գնահատում.....11

Ձևավորող գնահատման բաղադրիչները 12

Ձևավորող գնահատման ձևերը/ Թեստ 15

Ձևավորող գնահատման ձևերը/Բանավոր հարցում 16

Ձևավորող գնահատման ձևերը/Գրավոր աշխատանք.....17

Ձևավորող գնահատման ձևերը/ Գործնական աշխատանք.....18

Ձևավորող գնահատման ձևերը/ Տնային աշխատանք.....19

Ձևավորող գնահատման ձևերը/ Նախագծային աշխ.....20

Ձևավորող գնահատման քայլաշարը 21

Ամփոփիչ գնահատում..... 23

Միավորային գնահատում.....24

ԿԱՊԿՈՒ սովորողների համար իրականցվող միավորային գնահատում.....26

Ընդհանրացնող գնահատում.....28

Եզրակացություն 29

Օգտագործված գրականություն.....30

Ներածություն

Այն բանի իմացությունը, թե ինչպիսին պետք է լինի իրերի վիճակը, բնութագրում է խելացի մարդուն, այն բանի իմացությունը, թե ինչպիսին է իրերի վիճակն իրականում, բնութագրում է փորձառու մարդուն: իսկ այն բանի իմացությունը, թե ինչպես դրանք փոխել դեպի լավը, բնութագրում է հանճարեղ մարդուն: ***Դ. Դիդրո***

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը,
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը,
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը,
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը,
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը,
7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը,
8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,
10. դպրոցի հանդեպ ծնողների վստահության ձևավորումն ու ամրապնդումը:



ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն

Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը:

Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1. թեստ
2. բանավոր հարցում
3. գրավոր աշխատանք
4. գործնական աշխատանք
5. և այլն:

ԹԵՍՏԸ որպես հայտորոշիչ գնահատման ձև

Հայտորոշման հաճախ կիրառվող ձևերից է հայտորոշիչ թեստը, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում ստուգելու յուրաքանչյուր սովորողի նախնական գիտելիքների մակարդակը որևէ թեմայի ուսումնասիրումից առաջ: Այն կարելի է կիրառել ուսումնական տարվա սկզբում կամ որևէ ուսումնական փուլից առաջ, որպեսզի ուսուցիչը՝ արդյունքների վրա հիմնվելով, ճիշտ պլանավորի իր հետագա անելիքները, ուսուցման և ուսումնառության գործընթացը: Հայտորոշիչ թեստ նախագծելիս շատ կարևոր է հաշվի առնել նրանում ընդգրկված առաջադրանքների քանակը, տեսակը, բարդության աստիճանը, ինչպես նաև այդ առաջադրանքների համամասնությունը: Հայտորոշիչ թեստի հարցերի քանակը կախված է մեկնարկվող փուլի տևողությունից: Եթե փուլը կարճ է (դաս, մի քանի դաս) կամ բովանդակային առումով փոքր (առանցքային հասկացություն, ենթաթեմա և այլ), հարցերը և առաջադրանքները կարող են լինել փոքրաթիվ՝ 3-5 առաջադրանք՝ կարճ ժամանակում կատարելու համար, իսկ երկարատև փուլի կամ ծավալուն թեմայի համար՝ կարող են լինել քանակով ավելի շատ և ավելի երկար ժամանակի համար: Երկարատև փուլի համար անցկացվող հայտորոշիչ թեստի առաջադրանքների քանակը կախված է սովորողների տարիքային խմբի և դասավանդվող թեմայի առանձնահատկություններից, սակայն ժամանակը չպետք է գերազանցի 30 րոպեն: Թեստի կատարմանը հատկացվող ժամանակը որոշվում է՝ ելնելով թեստում ընդգրկված առաջադրանքներից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ ժամանակից, որն էլ կախված է այդ առաջադրանքերից յուրաքանչյուրի բարդության աստիճանից. որքան բարդ է առաջադրանքը, այնքան դրան հատկացվող ժամանակը կարող է երկար լինել:

Կարող է հարց ծագել. արդյոք հայտորոշման նպատակով կազմված թեստը կարո՞ղ է կիրառվել նաև թեման ամփոփելիս՝ ամփոփիչ գնահատման ժամանակ: Բնականաբար, ոչ, քանի որ գնահատման այդ երկու տեսակների նապատակները տարբեր են: Հայտորոշիչ գնահատման դեպքում ուսուցիչը նպատակ է սահմանում բացահայտել ուսուցանվող նոր թեմայի վերաբերյալ սովորողի ընդհանրական պատկերացումները, հետևաբար, հարցերը և

առաջադրանքները կազմվում են այնպես, որ դրանց կատարման համար բավարար լինի նախատեսվող թեմայի վերաբերյալ մակերեսային, ոչ խորքային իմացություն, իսկ ամփոփիչ գնահատման դեպքում ուսուցիչը նպատակ է սահմանում ստուգել, թե որքանով են սովորողները թեմայի ավարտից հետո յուրացրել թեմայի առանցքային, հիմնական հասկացությունները, ինչպես նաև առավել խորքային իմացությունը: Այս նպատակով հարցերի և առաջադրանքների բովանդակությունը էապես տարբերվում է հայտորոշման նպատակով տրվող առաջադրանքների բովանդակությունից: Բացի այդ, հայտորոշիչ գնահատման դեպքում թեստում կարելի է ընդգրկել միայն պարզ և միջին բարդության առաջադրանքներ, իսկ ամփոփիչ գնահատման դեպքում՝ պարզից բարդ առաջադրանքներ:

Թեստը կիրառվում է գնահատման բոլոր տեսակների դեպքում: Թեստն ունի հատկորոշիչներ՝ այսպես կոչված՝ «թեստի անձնագիր» կամ «նախագիծ», որում նշվում է ամեն ինչ թեստի կառուցվանքի ու բովանդակության վերաբերյալ: Ընդ որում՝ հատկորոշիչներից կարող ենք հասկանալ, թե գնահատման որ տեսակի թեստ է:

<u>Թեստի ընդհանրական հատկորոշիչները՝</u>

1. Դասարանը
2. Նպատակը
3. Թեման կամ թեմաները
4. Առաջադրանքների տիպերը
5. Առաջադրանքների բարդության աստիճանը և համամասնությունը
6. Առաջադրանքների քանակը
7. Հատկացվող ժամանակը

Հայտորոշիչ թեստի առանձնահատկությունները

1. Ստուգվում են սովորողների ընդհանրական գիտելիքները մեկնարկվող նոր թեմայի կամ թեմաների վերաբերյալ:
2. Օգտագործվում են մեկ ճիշտ պատասխան պահանջող՝ բազմակի ընտրության, լրացման, հաջորդականության վերականգնման կամ համապատասխանեցման և կարճ պատասխանով առաջադրանքներ:
3. Հարցերը ձևակերպվում են կարճ, պարզ և մատչելի:
4. Առաջադրանքները պետք է դասավորված լինեն պարզից միջին բարդության:
5. Հայտորոշիչ թեստերում ցանկալի չէ ներառել բարդ առաջադրանքներ, սակայն կարելի է մեկ կամ երկու հարցերով ստուգել նաև նախատեսվող թեմայի վերաբերյալ որոշ սովորողների մտածական ավելի բարձր կարողությունները՝ նրանց ներուժը բացահայտելու նպատակով:

Հայտորոշում իրականացնելուց հետո ուսուցիչն ընդհանրացնում է, ինչպես՝ առանձին սովորողների իմացության մակարդակը ուսուցանվող թեմայից, այնպես էլ՝ դասարանի ամբողջական պատկերը: Այստեղ կարելի է օգտվել «սխալների քարտեզագրում» աղյուսակից, որտեղ պարզորոշ արտացոլվում են հայտորոշիչ թեստի արդյունքները:

Սխալների քարտեզագրում կարելի է կիրառել նաև ամփոփիչ գնահատման արդյունքները վերլուծելիս, սակայն չպետք է մոռանալ, թե արդյունքները ինչ նպատակով ենք օգտագործելու. մի դեպքում՝ հայտորոշիչ թեստի արդյունքներն օգտագործվում են ուսուցումն

ու ուսումնառությունը ճիշտ պլանավորելու, բովանդակությունը սահմանելու, ինչպես նաև համապատասխան և արդյունավետ մեթոդներ ընտրելու համար, իսկ ամփոփիչ գնահատման արդյունքները օգտագործվում են սովորողի՝ թեմայի յուրացման արդյունքներն ամրագրելու և հաշվետվողականության նպատակով:

ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄԸ որպես հայտորոշիչ գնահատման ձև

Հայտորոշիչ գնահատման նպատակով իրականացվող բանավոր հարցման հիմնական մոտեցումը հարցեր ուղղելն է սովորողին, խմբին կամ ամբողջ դասարանին, ընդ որում՝ պարզ և միջին բարդության հարցեր, որոնք պետք է ձևակերպված լինեն հստակ, պարզ և միայն այդ թեմային վերաբերող՝ բարդության առաջին կարգի հարցեր.

Օրինակ՝ Ո՞վ է…, Ի՞նչ գիտեք…, Որտե՞ղ է գտնվում..., Ե՞րբ է ստեղծվել..., Ո՞ր դարից է սկիզբ առել… և այլն:

Բարդության երկրորդ աստիճանի հարցեր.

- Կարո՞ղ ես նկարագրել…
- Ինչպիսի՞ն են / է…
- Եթե այդպես է, ապա ...
- Ո՞րն է հիմնական իմաստը …
- Ի՞նչ քայլեր են հաջորդում …
- Ի՞նչ ես մտածում դրա մասին …
- Կարո՞ղ ես համեմատել ...
- Կարո՞ղ ես բացատրել, թե …
- և այլն

Բանավոր հարցման համար նպատակահարմար է կիրառել նաև որոշ մեթոդներ՝ ինչպես օրինակ մտքերի տարափը, մտքերի քարտեզագրումը, ԳՈՒՍ-ը կամ մտածիր–զույգ կազմիր–կիսվիր մեթոդները և այլն: Այս մեթոդներով ուսուցանվող թեմայի վերաբերյալ սովորողների նախնական գիտելիքները ստուգելուց հետո անհրաժեշտ է վերլուծել և անդրադառնալ արդյունքներին՝ տվյալ փուլի՝ թեմայի կամ դասի ավարտին: Օրինակ՝ պետք է պահպանել պաստառը, որի վրա երևում են մտքերի տարափի արդյունքները, այնուհետև դասի կամ թեմայի վերջում քննարկել սովորողների հետ: Նույնությամբ ԳՈՒՍ-ի աղյուսակը կարելի է փակցնել դասարանի պատին և պարբերաբար անդրադառնալ և վերլուծել, թե ինչը գիտեին, ինչը սովորեցին և ինչ արդյունքի հասան: Շատ ընդունված և կիրառելի մեթոդ է Մտածիր–զույգ կազմիր–կիսվիր մեթոդը: Սովորողները իրենց հատկացված ժամանակի ընթացքում մտածում են ներկայացվող թեմայի կամ հարցի շուրջ, զույգ են կազմում և կիսվում, թե ինչ գիտեն տվյալ թեմայի կամ դասնյութի վերաբերյալ:

Բանավոր հարցումը, սակայն, հնարավորություն չի տալիս միաժամանակ ստուգելու և ամրագրելու բոլորի նախնական գիտելիքներն ու հմտությունները:

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ որպես հայտորոշիչ գնահատման ձև

Ինչպես բանավոր հարցումը, այնպես էլ գրավոր աշխատանքը ևս կիրառվում է գնահատման երեք տեսակներում՝ կախված նպատակից: Գրավոր աշխատանքի ձև են թելադրությունը, շարադրությունը, փոխադրությունը, էսսեն, թեստը, բաց հարցերով կարճ շարադրանք պահանջող առաջադրանքները:

Հայտորոշման նպատակով, օրինակ՝ ուսուցիչը կարող է ընտրել թելադրության համար տեքստ, որով ուզում է ստուգել սովորողների գիտելիքները կետադրության կիրառության վերաբերյալ: Նշանակում է այդ տեքստում պետք է առկա լինեն կետադրական նշանների բազմաթիվ կիրառություններ: Ինչպես որ հայտորոշիչ թեստի արդյունքներն են գրանցվում սխալների քարտեզում, այնպես էլ գրավորի աշխատանքների արդյունքները պետք է վերլուծվեն, որպեսզի ուսուցիչը նոր դասը պլանավորելիս անդրադառնա այդ սխալներին և բարելավման ուղիներ որոշի՝ ելնելով սովորողների կարիքներից:

Գրավոր աշխատանքների միջոցով կարելի է ստուգել բազմաթիվ ուղղագրական կանոններ և գիտելիքներ:

Որպես գրավոր աշխատնքի ձև կարելի է կիրառել նաև կարճ փոխադրությունը կամ շարադրությունը՝ սովորողի ստեղծագործական մտքի ընթացքը վերլուծելու, միտքը շարադրելու, հիմնավորելու, ստեղծագործական և քննադատական կարողությունները ստուգելու նպատակով:

Ուսուցիչը կարող է որպես հայտորոշիչ աշխատանք կիրառել նաև արտագրությունը՝ սովորողի կողմից պատկերային հիշողությունն ու հիշողության ծավալը ստուգելու նպատակով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ որպես հայտորոշիչ գնահատման ձև

Գործնական աշխատանքը նույնպես կարելի կիրառել հայտորոշման նպատակով՝ կախված ուսումնասիրվող առարկայի և ուսուցանվող թեմայի առանձնահատկություններից:

Գործնական աշխատանքի միջոցով հայտորոշում կարելի է իրականացնել՝ որոշելու համար, թե գործնական ինչ հմտությունների և կարողությունների է տիրապետում սովորողը, որոնք կարող են հիմք հանդիսանալ մեկնարկվող թեմայի ուսումնասիրման համար:

Որոշ ուսումնական առարկաների, ինչպիսիք են՝ «Տեխնոլոգիան», «Ֆիզկուլտուրան», «Շախմատը», «Երաժշտությունը», «Կերպարվեստը», «Ֆիզիկան», «Քիմիան» «Բնագիտությունը» և այլն, ուսումնասիրման ժամանակ, առավել կարևորված է գործնական կիրառությունը: Հետևաբար, այս առարկաներում հայտորոշման համար նպատակահարմար է կիրառել գործնական աշխատանքը:

Օրինակ 1.

2-րդ դասարանում «Շախմատ» առարկայի ուսումնասիրումը. նպատակահարմար է սկսել գործնական աշխատանքի միջոցով հայտորոշիչ գնահատմամբ՝ պարզելու համար, թե երեխաներն ինչ գիտեն առհասարակ շախմատի մասին. արդյո՞ք ճանաչում են շախմատի խաղաքարերը, խաղատախտակը: Ուսուցիչը կարող է երեխաներին առաջարկել ներկայացված խաղաքարերի շարքից առանձնացնել նշված խաղաքարը, անվանել այն, ցույց տալ և բացատրել շախմատի խաղատախտակը և այլն: Այս կերպ՝ ուսուցիչը հնարավորություն է ունենում կարճ ժամանակում, գործնական քայլերի օգնությամբ ճանաչել, բացահայտել երեխաների նախնական գիտելիքների մակարդակը ուսուցանվող թեմայի վերաբերյալ և պլանավորել հետագա աշխատանքները՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարողությունների մակարդակը: Գործնական աշխատանքը կիրառվում է նաև բնագիտական առարկաներ ուսումնասիրելիս՝ ճանաչողական էքսկուրսիաներ կազմակերպելով, կամ օրինակ բակ դուրս գալով և թեմայի վերաբերյալ երեխաների նախնական պատկերացումները վերհանելով (Ես և շրջակա աշխարհը, Բնություն և այլն):

Օրինակ 2.

Լեզուների դասավանդման ժամանակ դերախաղի կազմակերպումը, թեմատիկ ֆիլմի դիտումը և մեկնաբանումը կարող են բավականին լավ տեղեկություն հաղորդել թեմայից կամ դասից առաջ սովորողների նախնական գիտելիքների մասին: Օրինակ՝ «Ընտանիք» թեման անցնելուց առաջ ուսուցիչը կարող է ստեղծել իրադրային դերախաղ՝ նշված թեմայով: Դերախաղը կօգնի հասկանալու, թե սովորողները, որքանով են տեղյակ թեմային և ինչպիսի բառապաշարի են տիրապետում թեմայի շրջանակում: Դրանք կարող են լինել կարճ և ամփոփ, որպեսզի հնարավորինս շատ սովորողներ կարողանան ցուցադրել թեմայի վերաբերյալ իրենց իմացությունը: Դերախաղը հաջողությամբ կարող է կիրառվել նաև պատմություն, գրականություն, հասարակագիտություն առարկաների ուսումնասիրման ժամանակ:

Հայտորոշիչ թեստի հատկորոշիչների օրինակ

Դասարանը՝ 2-րդ
Նպատակը՝ նոր ուսուցանվող թեմայի վերաբերյալ նախնական գիտելիքների վերհանում,
Թեման՝ «Վանակ»,

Առաջադրանքների տիպերը՝ փակ և բաց հարցեր,
Առաջադրանքների բարդության աստիճանը և համամասնությունը՝ պարզ և միջին
Առաջադրանքների քանակը՝ 3,
Հատկացվող ժամանակը՝ 7-8 րոպե:

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏ

1. Նշի՛ր միավանկ բառերը:

□ սեղան
□ ծառ
□ ժամացույց
□ գիրք
□ նկար

2. Նշի՛ր այն տողը, որում միայն բազմավանկ բառեր են:

□ քանոն, գրիչ, մարդ
□ դասարան, ընկեր, սրիչ
□ թուղթ, մատ, սար

3. Ընդգծի՛ր անտեսանելի գլխարկով ը ունեցող բառերը:

Ուսուցիչ, նստարան, սեղան, տուն, մարդ, գլխարկ, բժշկուհի, հայելի, մկրատ:

. Կատարել սովորողների կողմից լրացված թեստի արդյունքների վերլուծություն:
. Կազմել սխալների քարտեզ:

	Անունը, ազգանունը								
Առաջադրանքներ	Սով 1	Սով 2	Սով 3	Սով 4	Սով 5	Սով 6	Սով 7	Սով 8	
1. Թվարկված բառերի շարքում միավանկ բառերի ճանաչում									
2. Թվարկված բառերի շարքում բազմավանկ բառերի ճանաչում									
3. Գաղտնավանկ ունեցող բառերի ճանաչում									

Քարտեզի արդյունքներից հստակ երևում է և՛ յուրաքանչյուր սովորողի և՛ ամբողջ դասարանի գիտելիքների ընդհանուր պատկերը, որը թույլ կտա ուսուցչին դասը պլանավորելիս հստակ պատկերացնել, թե ինչի վրա ուշադրություն դարձնի և, որ սովորողն ինչի կարիք ունի: Նա հնարավորություն կունենա նաև պարբերաբար անդրադառնալու աղյուսակին՝ դասերը պլանավորելու համար: Ուսուցիչը կարող է ցուցադրել հայտորոշման արդյունքները նաև սովորողներին, որպեսզի նրանք նույնպես տեղեկանան իրենց չիմացած թեմաներին: Երբ սովորողը գիտի իր չհասկացածը կամ սխալ հասկացածը, նա դառնում է տեղեկացված և շահագրգիռ այդ թեմաներն ուսումնասիրելիս:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները,

դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում: Այն ապահովում է սովորողի՝ տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում ուսուցչը պետք է ուշադրություն դարձի հետևյալ հարցերին.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում

Չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին, և այս առումով ձևավորող գնահատման ճիշտ կիրառումը կապահովի նրանց ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Այդ նպատակով վերջնարդյունքները, ինչպես նաև դրանց գնահատման չափանիշները պետք է հասկանալի լինեն սովորողներին: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի կողմից՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձևավորող գնահատումն ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորած և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

Ուսման հանդեպ շարժառիթի բարձրացման նպատակով ապահովում է սովորողների ակտիվ մասնակցություն՝ սեփական ուսումնառության գործընացին.

Ինքնագնահատում

Ինքնագնահատումը ձևավորող գնահատման կարևոր բաղադրիչներից է, որի նպատակն է՝ ընդլայնել սովորողի ճանաչողության սահմանները, արժեքային համակարգը, ինչպես նաև ձևավորել պատասխանատվության զգացում:

Սովորողի ուսումնական առաջընթացի համար կարևոր են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իր իմացության մակարդակի ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

Որպեսզի հստակ ընկալվի, թե ինքնագնահատումը որքանով կարող է նպաստել սովորողի ուսումնառության արդյունավետությանը, անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել և օգնել՝ անդրադառնալու հետևյալ անհրաժեշտ գործոններին.

1. հստակ պատկերացնի առաջադրանքը,
2. որպես սովորող ինքնուրույն պարզի իր գիտելիքի մակարդակը
3. սեփական ուսման որակը բարելավելու միջոցներ փնտրի և մշակի դրանք կիրառելու ռազմավարություն:

Վերոնշյալ գործոնների ապահովումը հնրավորություն կտա սովորողին հստակ տեսնել և հասկանալ ձեռքբերումներն ու դժվարությունները և դրանց շտկման համար դրսևորել համապատասխան վերաբերմունք, ձգտում և կամք:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում է իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու կարևոր պայման է:

Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատման միջոցով ևս սովորողները տեղեկանում են իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու համար:

Փոխադարձ գնահատում իրականացնում են.

1. սովորողը՝ սովորողին,
2. խումբը՝ խմբին,
3. սովորողը՝ խմբին,
4. խումբը՝ սովորողին:

Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ. դա կօգնի սովորողին գնահատել իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնահատելիս լինի օբյեկտիվ:

Այս գործընթացը զարգացնում է սովորողի մտածողությունը և տրամաբանությունը. ամեն անգամ սովորողը ընկերոջ սխալները նկատելիս՝ անում է համապատասխան պարզաբանումներ, բերում հիմնավորված և փաստարկված օրինակներ: Դրանով բարձրանում է իր իսկ ուսումնառության արդյունավետությունը և արժևորվում են նրա ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:

Փոխադարձ գնահատումը նպաստում է գնահատողի և գնահատվողի սեփական իմացության վերարժևորմանը: Դա առաջընթացը խթանող հանգամանք է, քանի որ սովորողներից պահանջվում է՝

- անդրադարձ սեփական ուսումնառությանը,
- ինքնարժևորում ու գնահատման հիմնավորում,
- անձնական մեծ պատասխանատվություն:

Փոխադարձ գնահատման նպատակով կիրառվող աշխատանքների շնորհիվ ուսումնական գործընթացում ապահովվում է յուրաքանչյուր սովորողի գործուն ընդգրկվածությունը:

Հետադարձ կապ

Ձևավորող գնահատման բաղադրիչների շրջափուլում կարևոր է հատկապես հետադարձ կապի տրամադրումը: Ցանկացած աշխատանքից հետո և ընթացքում անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու իրենց ձեռքբերումները, աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները և բարելավելու իրենց բացթողումները:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի գործողությունների վերաբերյալ փոխադարձ արձագանքն է, այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների կողմից ուսուցչի գործողություններին տրվող անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սովորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և ուսումնառության արդյունքը բարելավելու ուղիներ գտնել:

Այսպիսով՝ հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:

Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ - սովորող, սովորող - ուսուցիչ կամ սովորող - սովորող կապերը: Ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրականացնում են համապատասխան վերլուծություններ՝ փոխադարձաբար անդրադառնալով աշխատանքում եղած ձեռքբերումներին և թերություններին:

Ներքին հետադարձ կապն ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է: Ե՛վ ուսուցիչը, և՛ սովորողը կարիք ունեն ինքնավերլուծության: Ուսուցիչը ստացված արդյունքները վերլուծելով՝ բացահայտում է իր գործողությունների ստացված և չստացված պահերը, դրանց հիման վրա պլանավորում հետագա գործողությունները, իսկ աշակերտը իր գործողությունները վերլուծելով՝ բարելավում է իր ուսումնառությունը:

Հետադարձ կապի իրականացման միջոցները

Բանավոր զրույց. երբ վերլուծությունները և շտկումները կատարվում են բանավոր քննարկման միջոցով: Հարցուպատասխանի, տարբեր հարցերի վերհանման միջոցով բանավոր քննարկվում են այն գործողությունները, որոնք բարելավման կարիք ունեն:

Գրավոր մեկնաբանություն. երբ վերլուծություններն ու բարելավման առաջարկներն իրականացվում են գրավոր կերպով:

Գծապատկեր. երբ ուսուցիչը հետադարձ կապը տալիս է գծապատկերների միջոցով: Այս միջոցը բարձրացնում է տեղեկատվության յուրացման արդյունավետությունը, քանի որ ուսուցչի՝ սովորողին կամ սովորողներին ուղղված խոսքը ուղեկցվում է նշաններով և գծանկարներով, որոնք կարող են լինել նախապես պայմանավորված նշաններ, սիմվոլներ, հուշող պատկերներ և այլն:

ՏՀՏ միջոցներն արդեն անդառնալի կերպով մուտք են գործել ուսուցման բոլոր գործընթացներ, հետևաբար այս հնարավորությունը նույնպես պետք է օգտագործել արդյունավետորեն: Տեղեկույթը, վերլուծությունները սովորողի համար դառնում են ավելի հետաքրքիր և արդիական:

ՁԵՎԱՎՈՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

1) գրավոր կարճ հարցում (թեստ).

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) տնային աշխատանք.

6) նախագծային աշխատանք.

7) քննարկում, բանավեճ.

8) այլ:

ԹԵՍՏԸ որպես ձևավորող գնահատման ձև

Ձևավորող գնահատման թեստը հնարավորություն է տալիս ուսուցչին կարճ ժամանակահատվածում և փոքր չափաբաժնով պարզելու սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակը և տրամադրելու արդյունավետ հետադարձ կապ՝ նշելով այն ուղիները, որոնցով սովորողները կարող են բարելավել իրենց ուսումնառությունը:

Ստորև տրված են ձևավորող գնահատման թեստի առանձնահատկությունները.

- Նախատեսվում է կարճ ժամանակի համար (5-10 րոպե):
- Կազմվում են նույն գիտելիքը, կարողությունը կամ հմտությունը ստուգող հարցեր կամ առաջադրանքներ (2-3 հարց, կամ մեկ պարզ առաջադրանք):
- Հարցերը մատչելի են սովորողների մեծ մասի համար, արդյունքները հեշտ վերլուծելի են:
- Ստուգվում են տեղում և հետադարձ կապը տրվում է անմիջապես:

Թեստի արդյունքների ստուգումը կարելի է իրականացնել տարբեր եղանակներով. օրինակ՝ ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին կամ ցուցապաստառին և դրանք սովորողներին ցույց տալ առաջադրանքի կատարման ավարտից հետո: Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկելու բացթողումները:

Սովորողներն այս դեպքում իրականացնում են ինքնագնահատում: Նույն օրինակով կարող են իրականացնել նաև փոխադարձ գնահատում:

ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄԸ որպես ձևավորող գնահատման ձև

Ձևավորող գնահատման ձևերից մեկը բանավոր հարցումն է, որի նպատակն է՝ պարզել սովորողի մտքերը քերականորեն և շարահյուսորեն ճիշտ ձևակերպելու, խոսքը

տրամաբանորեն շարադրելու, հակիրճ և ընդարձակ ձևակերպելու (ըստ անհրաժեշտության), գլխավոր միտքը դուրս բերելու, փաստարկելու, վերլուծելու և հիմնավորելու, ինչպես նաև հաղորդակցվելու կարողությունները:

Բանավոր հարցման ձևեր են մտքերի տարափը, հարց ու պատասխանը, զրույցը, ուսումնական նյութի վերարտադրումը, բանավեճը, մենախոսությունը, երկխոսությունը, նախագծերի ներկայացումը, դերային խաղը, շնորհանդեսների ներկայացումը և այլն:

Բանավոր հարցման ընթացքում կարող են կիրառվել բանավոր խոսքի գնահատման տարբեր ռուբրիկներ՝ ելնելով նպատակից և բանավոր հարցման ձևերի կիրառումից:

Բանավոր հարցման միջոցով կարելի է պարզել ուսուցանված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի յուրացման աստիճանը: Դա կարելի է անել առանձին սովորողների հարցմամբ կամ դասարանին ուղղված տարբեր հարցերով՝ ելնելով հարցման նպատակից և տևողությունից:

Բանավոր հարցման ժամանակ սովորողներին կարող է ուղղվել տարբեր բարդության հարցեր՝ պարզից բարդ, որոնց միջոցով հնարավոր կլինի ձևավորել սովորողների մտքերը արտահայտելու, պարզաբանելու, մեկնաբանելու, ստեղծագործելու, գնահատելու հմտություններ: Այդպիսի հարցերից են, օրինակ. ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ, ի՞նչ արեց, ինչպե՞ս, ինչու՞ և այլն:

Բանավոր հարցման ձև է նաև տեքստի բովանդակության շուրջ սովորողների կողմից միմյանց հարցեր տալը:

Սովորողները ծանոթանում են տեքստին , այնուհետև նրանք հարցեր են տալիս մեկը մյուսին, օրինակ՝ «ի՞նչ է տեղի ունեցել այս պատմության մեջ», «ո՞ր հերոսն է դրական», «ինչու՞» և այլն: Ուսուցիչը նախապես պետք է մեկնաբանի հարցերի տեսակները՝ պարզ, միջին, բարդ, և ուղղորդի սովորողներին, որ այս դեպքում հարցերը շատ պարզ չլինեն, քանի որ որքան հետաքրքիր է հարցը, այնքան հետաքրքիր է պատասխանը:

Տեքստին տրվող հարցերը կարող են տարբեր լինել, ըստ դասարանի և նպատակի՝ պարզից բարդ՝ ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ինչի՞ համար, ի՞նչ պատճառով և այլն: Հարցման մյուս տարբերակում ընթերցելուց հետո ուսուցիչն է հարցեր ուղղում սովորողներին:

Տեքստին վերաբերող բանավոր հարցման համար կարելի է կիրառել, օրինակ. «Սովորում ենք բառերով խաղալ» առաջադրանքը և այլն: Սովորողները կամ ուսուցիչը տեքստից կարդում են բառեր և թվարկում նրանց բնորոշ հատկանիշները և իմաստները: Առաջադրանքի այս տեսակը զարգացնում է սովորողների խոսքային մտածողությունը, բառապաշարը:

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ որպես ձևավորող գնահատման ձև

Ձևավորող գնահատման ձևերից է գրավոր աշխատանքը, որի նպատակն է զարգացնել սովորողի մտքերը գրավոր արտահայտեու հմտությունները: Ձևավորող գնահատման

ընթացքում կարող են տրվել գրավոր աշխատանքի հետևյալ տեսակները՝ արտագրություն, թելադրություն, շարադրություն, էսսե, փոխադրություն և այլն:

Դիտարկենք գրավոր աշխատանքի տեսակներից մեկը՝ թելադրությունը ձևավորող գնահատման տեսանկյունից:

Թելադրության միևնույն տեքստի վրա կարելի է ձեռնարկել որոշակի քայլեր՝ երեխային աստիճանաբար ակտիվ սովորող դարձնելու համար: Ուսուցիչը կարող է աշխատանքում նշումներ չկատարել, այլ կանաչ գույնի գրիչով դուրս բերել սովորողի թույլ տված սխալները, վրիպակներն ու ջնջումներն իրենց ճիշտ տարբերակով, և տալ առաջադրանք՝ դրանք տեքստում ինքնուրույն գտնել և ուղղել:

Առաջադրանքը կատարելու համար սովորողը «ստիպված է լինելու» առնվազն մի քանի անգամ կարդալ տրված օրինակները, տեքստում դրանք գտնել և ինքնուրույն ուղղել, ինչը ոչ թե մեխանիկական, այլ ակտիվ մտածական աշխատանք է (համեմատու: Այս դեպքում ուսուցչի և սովորողի գործողությունները հավասարակշռվում են: Այս, և այլ տարբերակներ կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝

https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_69.html

Ուսուցիչն ավելի ակտիվ դեր է հատկացնում սովորողին, որն արդեն ոչ միայն ինքնուրույն կողմնորոշվում, այլև ինքնուրույն բարելավում է սեփական աշխատանքը՝ առաջնորդվելով ուսուցչի պայմանական նշաններով: Գնահատման նույն սկզբունքները կարելի է կիրառել նաև գրավոր աշխատանքի այլ տեսակների դեպքում: Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ որպես ձևավորող գնահատման ձև

Սովորողի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար կլինեն այնքանով, որքանով նա կարող է դրանք կիրառել: Այդ գիտելիքները կիրառելու կարողությունը զարգացնելու նպատակով կարևոր դեր ունեն գործնական աշխատանքները: Հաշվի առնելով ուսումնական առարկայի առանձնահատկությունները՝ գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվել, չափումներ կատարել, քարտեզագրել, գործիքներով աշխատել, փորձեր կատարել, մոդելավորել, մակետներ, պաստառներ, տեսանյութեր ստեղծել, բանավեճ, քննարկում, դերախաղ իրականացնել, ՏՀՏ գործիքներ կիրառել և այլն:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

1. վերարտադրողական, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),

2. մասամբ որոնողական, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),

3. ստեղծագործական, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այդ թվումն նաև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում՝ աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, ինչպես նաև նախագծի իրականացում և արդյունքների կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքով՝ դպրոցում, տանը կամ այլ վայրում և գնահատվել բալերով կամ բառային բնութագրումներով:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ որպես ձևավորող գնահատման ձև

Տնային աշխատանքները որպես ինքնուրույն գործունեության ձև նպաստում են սովորողի ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորմանը: Տնային հանձնարարությունները պետք է լինեն ոչ մեծ ծավալի, որպեսզի չզբաղեցնեն սովորողի հանգստի, խաղի, սնվելու, նախասիրությամբ զբաղվելու և քնի համար նախատեսվող ժամանակը: Տնային աշխատանքի համար պետք է հանձնարարել դասարանում կատարած առաջադրանքների նմուշներից: Կարելի է նաև տնային աշխատանքեր հանձնարարելիս կիրառել տարբերակված մոտեցում:

Տնային աշխատանքի ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, որպեսզի ձևավորվի պատասխանատվություն և ընկալվի տնային աշխատանքի կարևորությունը: Սակայն պետք է նշել, որ պարտադիր չէ յուրաքանչյուր դասից հետո տնային աշխատանք հանձնարարելը, հատկապես, եթե ուսուցիչը վստահ է, որ երեխաները յուրացրել են ուսումնական նյութը:

Տնային աշխատանքներ հանձնարարելիս կարևոր է, որ

- առաջադրանքների բովանդակությունը լինի հասկանալի յուրաքանչյուր սովորողին,
- առաջադրանքի հետ տրվեն համապատասխան պարզաբանումներ,
- ըստ անհրաժեշտության առաջադրանքերը լինեն տարբերակված և անհատական,
- առարկայի առանձնահատկությունը հաշվի առնելով կարելի է ներառել ոչ ստանդարտ հարցեր,
- պարտադիր ստուգվի տնային աշխատանքը:

Տնային աշխատանքը կարելի է ստուգել տարբեր եղանակներով:Առավել հաճախ տնային աշխատանքի ստուգման ընթացքում կիրառվում է բանավոր հարցումը: Ուսուցիչը տնային աշխատանքի բովանդակության շուրջ տալիս է բանավոր հարցեր, իսկ սովորողները

պատասխանում են, և այդ ընթացքում պարզ են դառնում այն դժվարությունները, որոնց հանդիպել են սովորողները աշխատանքը կատարելիս: Այնուհետև ուսուցիչը խմբավորում և պարզաբանում է չընկալված հարցերը:

Բանավոր հարցման միջոցով տնային աշխատանքի ստուգումը հնարավորություն է տալիս, որ մյուս սովորողները, հետևելով պատասխաններին, հասկանան և անհրաժեշտության դեպքում կարողանան ուղղել իրենց սխալները:

Բանավոր հարցման ձև է, երբ ուսուցչի հայեցողությամբ սովորողը որևէ առաջադրանք մեկնաբանելով կատարում է առաջադրանքը:

Ստուգման կարևոր ձև է նաև ինքնագնահատումը կամ փոխադարձ գնահատումը: Ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան համեմատելու իրենց աշխատանքների արդյունքները ճիշտ պատասխանների հետ և շտկելու սխալները: լուծել սովորողներին: Նրանք կարող են խաչբառը լուծել ինքնուրույն կամ խմբով:

Եթե որևէ սովորող չի կատարել տնային աշխատանքը, ապա ուսուցիչը պետք է անպայման պարզի դրա պատճառները, որոնք կարող են լինել ամենատարբեր բնույթի:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ որպես ձևավորող գնահատման ձև

Յուրաքանչյուր սովորողի համար ստեղծվում է ձեռքբերումների թղթապանակ, որի մեջ ներառվում են սովորողի կատարած աշխատանքները: Թղթապանակը սովորողի «ուսումնառության պատմությունն» է, նրա հաջողությունների, անձնային զարգացման, ստեղծագործական աճի վկայությունը՝ կոնկրետ օրինակների և ուղեկցող դիտարկումների տեսքով: Թղթապանակը ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և պահման լավագույն տարբերակներից է, որը ծառայում է սովորողի առաջընթացն ու ձեռքբերումները տեսանելի դարձնելուն: Ուսումնական թղթապանակի բովանդակության մաս են կազմում նաև սովորողի վերաբերյալ ուսուցչի, համադասարանցիների, ծնողների նշումները, դիտարկումները և սովորողի հետ զրույցների, հարցազրույցների նկարագրությունները: Թղթապանակը կազմվում է մեկ ուսումնական տարվա համար և տարեվերջին ծնող-ուսուցիչ հանդիպման ժամանակ հանձնվում է սովորողի ընտրանիքին: Ուսումնական թղթապանակը նպաստում է սովորողների, ուսուցիչների համագործակցությանը, հնարավորություն է ընձեռում գնահատելու ուսման ընթացքում ներդրված ջանքերը, ձեռքբերումներն ու առաջընթացը:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ որպես ձևավորող գնահատման ձև

Ուսումնական նախագծի նախապատրաստական փուլից սկսած՝ մինչև ամփոփում և վերլուծություն ուսուցիչը և սովորողները իրականացնում են ձևավորող գնահատում, որի

նպատակն է հետևել նախագծային աշխատանքի իրականացման ողջ ընթացքին, վեր հանել աշխատանքի կատարման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները, բացթողումները, թերացումները, տրամադրել սովորողներին անհրաժեշտ տեղեկատվություն՝ հետագա աշխատանքը ճիշտ ճանապարհով իրականացնելու և բարելավելու նպատակով: Նախագծի իրականացման ողջ ընթացքում ապահովվում է հետադարձ կապ ուսուցչի և սովորողները միջև: Ձևավորող գնահատման ընթացքում ուսումնական նախագծերի իրականացման նպատակներից մեկն է նաև, զարգացնել սովորողների ինքնուրույն սովորելու, հետազոտություն կատարելու, տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու թվային և մեդիա գրագիտության հմտությունները: Այս նպատակով նախագծային աշխատանքեր կարելի է իրականացնել դեռևս տարրական դասարաններից սկսած:

Ուսուցիչը կազմակերպում և վերահսկում է նախագծային աշխատանքի յուրաքանչյուր փուլը, հետևում է, որ

- սովորողները չշեղվեն նպատակից,
- նրանց որոնողական գործունեությունը լինի նպատակային, ուղղված լինի արդյունքի հասնելուն,
- նախագծային աշխատանքը լինի հետաքրքիր և սովորողների համար իրագործելի:

Նախագծային աշխատանք իրականացնելու ընթացքում ուսուցչի և սովորողի դերը.

Սովորող	Ուսուցիչ
Սահմանում է գործունեության նպատակը:	Օգնում կամ ուղղորդում է սահմանել նպատակը:
Սահմանում է վերջնարդյունքներ:	Օգնում է սահմանել վերջարդյունքներ:
Ձեռք է բերում նոր գիտելիքներ:	Առաջարկում է տեղեկատվության աղբյուրներ:
Փորձարկում է:	Բացահայտում է աշխատանքի իրականացման հնարավոր ձևերը:
Ընտրում կամ գտնում է լուծումներ:	Օգնում է կանխատեսել արդյունքները:
Ակտիվ է:	Ստեղծում է պայմաններ սովորողի ակտիվ աշխատանքի համար:
Պատասխանատու է աշխատանքի համար:	Օգնում է գնահատել ընթացքը, բացահայտել ձեռքբերումները և թերացումները:
Իրականացնում է ինքնագնահատում և փոխադարձ գնահատում (խմբային նախագծի դեպքում):	Որոշում է ձևավորող գնահատման գործիքները և սովորողների հետ մշակում է գնահատման չափանիշներ:
Ապահովում է հետադարձ կապ:	Ապահովում է հետադարձ կապ:

Նախագծային աշխատանքի գնահատումը պետք է լինի խթանող, սովորողները պետք է խրախուսվեն: Կիրառվում են ձևավորող գնահատման տարբեր գործիքներ: Օրինակ՝ կարելի է իրականացնել ինքնագնահատում, որի արդյունքում սովորողը կիմանա իր աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, ընտրված քայլերի արդյունավետությունը: Այն կնպաստի հետագա աշխատանքների բարելավմանը:

Ինքնագնահատումը կարելի է իրականացնել ստորև ներկայացվող գործիքով.

Չափանիշներ	Կարողանում եմ ինքնուրույն	Կարողանում եմ օգնությամբ	Դժվարանում եմ

Կազմել նախագծի աշխատանքային պլան			
Օգտվել համացանցից տեղեկատվություն գտնելու համար			
Ընտրել անհրաժեշտ առաջադրանքներ ու նկարներ			
Վերլուծել տեղեկությունը, առանձնացնել հիմնական տեղեկույթը			
Նյութը դասավորել տրամաբանական հերթականությամբ			
Ստեղծել սահիկաշար			
Համագործակցել նույն նախագծի վրա աշխատող մյուս սովորողների հետ			
Ներկայացնել նախագծային աշխատանքը			

Այս գործիքը կարելի է կիրառել նաև փոխադարձ գնահատում իրականացնելու նպատակով:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՅԼԱՇԱՐԸ

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման ձևերն ու հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա:

Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի ձևերով և հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատվում է սովորողի գործունեությունը (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր տեսակների ու ձևերի հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

Սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ենթադրում է.

- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

ԱՄՓՈՓԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական

ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Հաստատության 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից մինչև 12-րդ դասարանը ներառյալ ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային գնահատման միջոցով:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով: Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում՝ «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում՝ «-»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ.

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) նախագծային աշխատանք.

6) այլ:

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

.Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

Միավ.	**Բնութագրիչները**
1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:
2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ,

	իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:
6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:
10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային գնահատումն իրականացվում է նաև ԿԱՊԿՈՒ սովորողների համար: 2014թ.-ի դեկտեմբերի 2-ին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի մեջ համընդհանուր ներառումն ամրագրվել է որպես պետական քաղաքականություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացը հիմնվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա:

Ներառական կրթությունը համարվում է յուրաքանչյուր սովորողի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն:

Ներառական կրթությունը ենթադրում է բոլոր՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը տվյալ դասի ուսումնական նյութի յուրացման գործընթացում:

Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, որն ուսուցչից պահանջում է ճիշտ կազմակերպելու ումնական գործընթացը՝ կարևորելով սովորողի գնահատումն ընդհանրապես և մասնավորապես ԿԱՊԿՈՒ սովորողի գնահատումը:

Քանի որ ԿԱՊԿՈՒ սովորողները ներառվում են ուսումնական գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝ օգտագործելով միավորային գնահատման համապատասխան տեսակները (կախված ներառման կարիքից) և գնահատման 10 միավորային սանդղակը: Հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ սովորողների առանձնահատկությունները, ուսումնական ձեռքբերումների ստուգման և գնահատման միջոցները հարմարեցվում են նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին: Առաջադրանքները կարելի է կազմել ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի համար՝ չափորոշչի նվազագույն պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դրանք տրոհելով և հարմարեցնելով այդ սովորողների ընկալման հնարավորություններին: Ամփոփիչ աշխատանքները պետք է հարմարեցվեն ԿԱՊԿՈՒ սովորողի կարիքներին՝ ըստ անհրաժեշտության ապահովելով լրացուցիչ ժամանակ, հանգստանալու ընդմիջումներ: Սովորողը կարող է իր պատասխանը գրի առնել համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցով: Գնահատման և գրանցման համար կիրառելի են

- Ստուգաթերթեր (արձանագրում են այս կամ այն հատկանշի առկայությունը կամ բացակայությունը),
- թեստեր, որոնք պարունակում են չափորոշչային նվազագույն պահանջների տրոհված մասերին համապատասխանող առաջադրանքներ:

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիվ գնահատման հիմքի վրա:

ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման կիրառման քանակները, կախված տվյալ սովորողի կարիքի առանձնահատկություններից, կարելի է հասցնել թույլատրելի նվազագույն քանակներին:

Այդ աշխատանքները կարող են գնահատվել միավորային տարբեր սանդղակներով, բայց պաշտոնական գրանցման համար դրանք պետք է բերել 10 միավորային սանդղակի:

Ամփոփիչ թեստում պետք է ընդգրկել պարզ առաջադրանքներ՝ ԿԱՊԿՈՒ սովորողի անցումային միավորն ապահովելու հնարավորություն տալու համար: Թեստը լրացնելիս, անհրաժեշտության դեպքում, ԿԱՊԿՈՒ սովորողի համար նախատեսել ընդմիջում:

Քանի որ ԿԱՊԿՈՒ սովորողները ներառվում են ուսումնական ողջ գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝ օգտագործելով միավորային գնահատման բոլոր տեսակները և գնահատման 10 միավորային սանդղակը

ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվում է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով:

Դրական է գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույն հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում են նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, խմբով աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

Սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատման առանձնահատկություններն են՝

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը.

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչը սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել.

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է՝

1) սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը.

2) առարկայական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների յուրացումը.

3) տեղեկատվության մտապահումը.

4) աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը.

5) սովորողի ուսումնառության մոտիվացիան.

6) սովորողի ինքնուրույնությունը.

7) սովորողի ինքնագնահատման ունակությունը:

46. Սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից:

Բնութագրող գնահատումն իրականացվում է՝

1) 1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին.

2) տարրական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կրթական ծրագրի ավարտին:

Տարրական դպրոցի յուրաքանչյուր սովորողի ուսումնառության կիսամյակային արդյունքների ամփոփման նպատակով կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Սովորողի ուսումնական ձեռքբերումներն արձանագրելու համար հիմք են ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

Բնութագրող գնահատման չափանիշները հստակեցվում և տեղայնացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների:

Ամփոփիչ գնահատման ձևերից սովորողների ուսումնառության արդյունքները գրանցվում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում և կցվում են սովորողի անձնական գործ

Գրականության ցանկ/հղումներ

1. Ամսագիր "Մաթեմատիկանև Ֆիզիկան "դպրոցում

2. Ամսագիր "Մաթեմատիկանդպրոցում "

3 .Ամսագիր "Математикавшколе"

4. Аристова Л.П. Активность учения школьника

5. Научно-методические основы исследобания познавательнойд

https://www.youtube.com/watch?v=ehtqZU4Zvg0&ab_channel=%D4%B3%D5%86%D4%B1%D5%80%D4%B1%D5%8F%D5%88%D6%82%D5%84%28%D4%BF%D4%B6%D5%86%D4%B1%D4%BF%D5%80%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%29

https://kznakgnahatum.blogspot.com/

https://www.youtube.com/channel/UCYO-VKWrDtDD7iuQDBwm6yw